Պայմանական հայտերի տեսակները Apricot Capital բջջային հավելվածում

Պայմանական հայտը նախապես սահմանված պայմաններով հայտ է, որը կատարվում է միայն այն ժամանակ երբ սահմանված պայման(ներ)ը (ստոպ գնի) բավարարվում է (են): Նման հայտերն օգտագործվում են հնարավոր կորուստները սահմանափակելու համար, երբ առևտրի գները շարժվում են կանխատեսվող միտման հակառակ ուղղությամբ:

Ստոպ գինը հայտի կատարման պայման է, որը նշված գործիքով վերջին գործարքի գնի սահմանաչափն է:

Apricot Capital բջջային հավելվածով կարող եք ներկայացնել հետևյալ պայմանական հայտերը.

1. Ստոպ լիմիտային հայտ (Պայմանական հայտերի ներդիր)

Ստոպ լիմիտային հայտը պայմանական հայտի տեսակ է, որի կատարման ժամանակ ստեղծվում է լիմիտային հայտ: Այն կարող է կատարվել շուկայական գնով կամ նախապես սահմանված գնով:

Նպատակը. Այս հայտն օգտագործվում է շուկայական տատանումների դեպքում հնարավոր կորուստները սահմանափակելու համար:



Ստոպ լիմիտային հայտի օրինակ

Ենթադրենք, որ դուք գնել եք Apple-ի* բաժնետոմս 180 դոլարով: Ծուկայական ներկայիս գինը 209 դոլար է, բայց շուկայում նկատում եք հնարավոր անկման նշաններ: Ծահույթն ապահովելու և հնարավոր կորուստները սահմանափակելու համար դուք Apricot Capital բջջային հավելվածում մուտքագրում եք ստոպ լիմիտայիան հայտ նշելով հետևյալ պայմանները.

•Եթե բաժնետոմսի գինը իջնի մինչև 206 դոլար և դրանից ցածր, ապա բաժնետոմսը վաճառել շուկայական գնով (կամ նշված գնով, եթե «Վաճառել շուկայական գնով» կոճակը անջատված է):

Նկար 1 Ստոպ լիմիտային հայտի օրինակ

2. Կապակցված պայմանական հայտ (Լիմիտային հայտի ներդիր)

Կապակցված պայմանական հայտում նույն ֆինանսական գործիքի համար կան երկու տարբեր հայտեր, որոնք ունեն նույն ուղղությունը (գնել/վաճառել) և ծավալը: Հայտերից մեկը ստոպ լիմիտային հայտ է, իսկ մյուսը՝ լիմիտային հայտ: Երբ այս հայտերից մեկը կատարվում է, մյուսը չեղյալ է հայտարարվում:

Նպատակը. Այս տեսակի հայտերը նախատեսված են դիրքերի փակման համար: Ստոպ հայտն օգտագործվում է վնասները սահմանափակելու համար, իսկ ստոպ լիմիտային հայտը՝ շահույթն ամրագրելու համար: Երբ հայտերից մեկը կատարվում է, համապատասխան կապակցված հայտն ավտոմատ կերպով չեղարկվում է:

Երբ կատարվում է ստոպ հայտը, կապակցված լիմիտային հայտը ամբողջությամբ չեղյալ է հայտարարվում:



Կապակցված պայմանական հայտի օրինակ

Ենթադրենք, որ դուք գնել եք Apple-ի* բաժնետոմս 180 դոլարով: Ծուկայական ներկայիս գինը 207 դոլար է, բայց շուկայում նկատում եք հնարավոր անկման նշաններ:

Ծահույթն ապահովելու և հնարավոր կորուստները սահմանափակելու համար դուք ներկայացնում եք կապակցված պայմանական վաճառքի հայտ հետևյալ պայմաններով.

- Եթե բաժնետոմսի գինը բարձրանում է, ապա վաճառել բաժնետոմսը 209 դոլարով և ստանալ շահույթ
- Եթե շուկան սկսի անկում ապրել, սահմանափակել կորուստները (կապակցված պայմանական հայտ): Եթե գինը հավասարվի 204 դոլարին կամ նվազի, ապա վաճառել 204 դոլարով:

Նկար 2 Կապակցված պայմանական հայտի օրինակ

3. Շահույթի վրա հիմնված հայտ (Պայմանական հայտերի ներդիր)

Շահույթի վրա հիմնված հայտը պայմանական հայտի տեսակ է, որը կատարվում է, երբ ֆինանսական գործիքի գինը դառնում է սահմանված չափով պակաս կամ առավել, քան շուկայում գրանցված առավելագույն գինը (վաճառքի հայտերի համար) կամ նվազագույն գինը (գնման հայտերի համար): Այս հայտի դեպքում, երբ վերջին գործարքի գինը հասնում է սահմանված լիմիտային գնի մակարդակին, համակարգը սկսում է ստուգել ֆինանսական գործիքի վերջին գնի առավելագույ/նվազագույն շեմերը: Վաճառքի հայտի դեպքում, եթե վերջին գործարքի գինը իջնում է առավելագույնից այն արժեքով, որը գերազանցում է սահմանված մարժան, ստեղծվում է լիմիտային հայտ, որի գինը ցածր է վերջին գործարքի գնից պաշտպանիչ սփրեդի չափով: Մարժայի և պաշտպանիչ սփրեդի արժեքները սահմանվում են միավոր գնով:

Նպատակը. Ֆինանսական գործիքի դիրքը փակել առավելագույն շահույթով:

Շահույթի վրա հիմնված հայտի օրինակ

Ենթադրենք, որ դուք գնել եք Apple-ի* բաժնետոմս 208 դոլարով և ցանկանում եք շահույթն ամրագրել, եթե գինը հասնի 270 դոլարի:

Այդ նպատակով դուք հավելվածում մուտքագրում եք շահույթի վրա հիմնված հայտ հետևյալ պայմաններով.

- Հայտի գործարկման պայմանը՝ վաճառել, եթե գինը հասնում է կամ գերազանցում է 270 դոլարը:

Միևնույն ժամանակ, կարևոր է նշել հետևյալ երկու պայմանները՝

- Առավելագույն գինց շեղում (մարժա) | Մարժան սահմանում է, թե որքանով պետք է ներկայիս շուկայական գինը իջնի լոկալ առավելագույնի մակարդակից, որպեսզի շահույթի վրա հիմնված հայտն ակտիվանա: Այն օգնում է խուսափել վաղաժամ կատարումից կարճաժամկետ գնային տատանումների ժամանակ:
- Պաշտպանիչ սփրեդ (եթե «Կատարել շուկայական գնով» կոճակն անջատված է) | Սփրեդը սահմանում է, թե հայտի գործարկման գնից որքան ցածր գնով կդրվի իրական լիմիտային հայտը: Այն պաշտպանիչ բուֆերի դերակատարում ունի արագ փոփոխվող

շուկայական պայմաններում հայտի կատարման հավանականությունը մեծացնելու գործում:

Եթե նշված պայմանական հայտը ներկայացնելիս «մարժա» և «սփրեդ» դաշտերը չեն լրացվում, համակարգը դրանց համար ընդունում է զրոյական արժեքներ:



Ենթադրենք մեր օրինակում սահմանվել են հետևյալ կարգավորումները՝ մարժա - 4, սփրեդ - 2:

Երբ բաժնետոմսի գինը հասնում է 270 դոլարի, շահույթի վրա հիմնված հայտն ակտիվանում է և համակարգը սկսում է հետևել առավելագույն գնի վարքագծին: Երբ գինը բարձրանում է 270 դոլարից, յուրաքանչյուր նոր ավելի բարձր գին դառնում է նոր լոկալ առավելագույն, և այս առավելագույնից ցանկացած անկում դիտարկվում է որպես հնարավոր կորուստ:

Համակարգը անընդհատ ստուգում է, թե արդյոք վերջին գործարքի գինն ավելի ցածր է քան «լոկալ առավելագույն - մարժա» արժեքը:

Նկար 3 Շահույթի վրա հիմնված հայտի օրինակ

Դիտարկենք հետևյալ դեպքերը՝

- Եթե գինը հասնում է 273 դոլարի սահմանը, ապա իջնում է մինչև 270 և դառնում է նորից 273 դոլար, լիմիտային հայտը չի ակտիվանում, քանի որ գինը նվազել է ընդամենը 3 դոլարով (սահմանված 4-ի փոխարեն)
- Սակայն, եթե գինը իջնում է 273 դոլարից մինչև 169 դոլար (4 դոլար անկում), կատարման պայմանը բավարարվում է և այդ պահին համակարգը տեղադրում է լիմիտային վաճառքի հայտ՝ «Վերջին գործարքի գին - պաշտպանիչ սփրեդ: 169 - 2 = 167 դոլար» գնով:

4. Շահույթի վրա հիմնված + ստոպ լիմիտային հայտ (Պայմանական հայտերի ներդիր)

Շահույթի վրա հիմնված + ստոպ լիմիտային հայտ հայտն ունի երկու պայման.

- Ամրագրել շահույթը, եթե վերջին գործարքի գինը շուկայում, որը հասել է առավելագույնին, վատթարանում է սահմանված մարժան գերազանցող չափով,
- Սահմանափակել կորուստը, եթե վերջին գործարքի գինը հասնում է սահմանված արժեքին:

Եթե պայմաններից որևէ մեկը բավարարվում է, մյուս պայմանի ստուգումը դադարեցվում է: Եթե հայտի երկու պայմաններն էլ միաժամանակ բավարարվում են, հայտը կատարվում է «ամրագրել շահույթը» պայմանով:

Նպատակը. Միաժամանակ սահմանել առավելագույն շահույթ և սահմանափակել հնարավոր վնասները:

Շահույթի վրա հիմնված + ստոպ լիմիտային հայտի օրինակ

Ենթադրենք, որ դուք գնել եք Apple-ի* բաժնետոմս 209 դոլարով: Նպատակն է ֆիքսել շահույթը, եթե գինը բարձրանա մինչև 215 դոլար և սահմանափակել կորուստները, եթե այն իջնի 201 դոլարից:

Դրա համար դուք հավելվածում մուտքագրում եք պայմանական հայտ հետևյալ ակտիվացման պայմաններով.

- Շահույթն ամրագրելու նպատակով՝ վաճառել բաժնետոմսերը, եթե գինը կհավասարվի կամ կգերազանցի 215 դոլարին,
- Կորուստները սահմանափակելու համար՝ վաճառել բաժնետոմսերը, եթե գինը կհավասարվի կամ կիջնի 201 դոլարից:

Բացի այդ, կարող եք նշել հետևյալ երկու պայմանները.

- Առավելագույնից շեղում (մարժա) | Որքանով պետք է ընթացիկ գինը իջնի լոկալ առավելագույնից, որպեսզի շահույթի վրա հիմնված հայտն ակտիվանա:

- Պաշտպանիչ սփրեդ (եթե «Կատարել շուկայական գնով» կոճակն անջատված է) | Հայտի գործարկման գնից որքան ցածր գնով պետք է դրվի լիմիտային հայտը:

Ենթադրենք, որ սահմանել եք հետևյալ արժեքները՝ մարժա - 4 և պաշտպանիչ սփրեդ - 2:

Դիտարկենք հետևյալ տարբերակները.



- Apple-ի* բաժնետոմսի գինը սկսում է բարձրանալ: Հենց որ այն հասնում է 215 դոլարի, շահույթն ամրագրելու պայմանն ակտիվանում է, և համակարգը դադարեցնում է ստոպ լիմիտային հայտի դիտարկումը: Այս պահից սկսած՝ այն սկսում է հետևել, թե արդյոք գինը շարունակում է բարձրանալ և 215 դոլարից բարձր ցանկացած նոր գին համարվում է նոր լոկալ առավելագույն: Այս լոկալ առավելագույնից ցանկացած անկում դիտվում է որպես հնարավոր հակադարձում՝ կորստի վտանգ (մանրամասների համար տես «Շահույթի վրա հիմնված» հայտի օրինակը):
- Եթե բարձրանալու փոխարեն Apple-ի* բաժնետոմսի գինը սկսում է ընկնել և հասնում է 198 դոլարի, շահույթ վերցնելու պայմանը այլևս չի վերահսկվում: Տեղադրվում է ստոպ լիմիտային վաճառքի հայտ, որը կկատարվի կամ շուկայական գնով, կամ նախապես հայտում սահմանված բաժնետոմսի գնով:

Նկար 4 Շահույթի վրա հիմնված + ստոպ լիմիտային հայտի օրինակ

Պայմանական հայտերի տևողությունը

Պայմանական հայտերի տևողությունը կառավարելու համար, մասնավորապես՝ ստոպ լիմիտային, շահույթի վրա հիմնված և շահույթի վրա հիմնված + ստոպ լիմիտային հայտերի, օգտագործվում են հավելվածում առկա հետևյալ հնարավորությունները՝

1. Պահել մինչև չեղարկելը (good till cancel) | Այս ձևով հայտը պահվում է ակտիվ մինչև այն ձեռքով չեղարկվի օգտատիրոջ կողմից առևտրային ժամերի ընթացքում, եթե դեռևս չի կատարվել:
2. Սահմանել գործողության ժամկետ (validity period) | Այս դեպքում հավելվածը թույլ է տալիս օգտատերերին սահմանել հայտի ավարտի համար հստակ ամսաթիվ: Եթե մինչև նշված ամսաթիվը հայտը չի կատարվում, այն ավտոմատ կերպով չեղարկվում է ժամկետի ավարտին:



Նկար 5 Պայմանական հայտերի տևողության կարգավորումներ

*Նյութում ներկայացված օրինակները կրում են միայն տեղեկատվական բնույթ: Դրանք չեն հանդիսանում ներդրումային խորհուրդ կամ որևէ կոնկրետ արժեթուղթ գնելու կամ վաճառելու առաջարկ: Տեքստում նշված նախկինում գրանցված կատարողականը չի երաշխավորում ապագայում նմանատիպ արդյունքներ: